



Միջազգային ցանց



Որակյալ ծառայություններ



Համագործակցություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ

Մենք առաջարկում ենք Ձեզ աուդիտորական ծառայություններ՝ հիմնված բարձր որակի, փորձի և նորարարության վրա:


2025թ.



Բացահայտենք

Գրանթ Թորնթոնը
միասին

Գրանթ Թորնթոնը աշխարհում



\$8մլրդ. դոլար
2024թ.-ին ունեցած հասույթ

Մենք հանդիսանում ենք աշխարհի 156 երկրներում ավելի քան **76,000** աշխատակից ունեցող ընկերությունների ցանց, և մենք այստեղ ենք աջակցելու Ձեզ կյանքի կոչել Ձեր յուրաքանչյուր նպատակը:

Համաշխարհային Գրանթ Թորնթոն ցանցի անդամ ընկերությունները առաջարկում են աուդիտորական և խորհրդատվական բարձրակարգ ծառայություններ, որոնք կօգնեն զարգացնել Ձեր բիզնեսը անկախ Ձեր գտնվելու վայրից:

Մշակույթ, որի հիմքում ընկած է որակը

Յուրաքանչյուր աուդիտորական առաքելությանը մենք մոտենում ենք մեծ պատասխանատվությամբ և հստակ շեշտադրումներով: Մենք ոչ միայն ստուգում ենք, որ Ձեր ֆինանսական հաշվետվությունները ներկայացված լինեն ճշգրիտ և համապատասխան կիրառելի մասնագիտական ստանդարտներին, այլ նաև տրամադրում ենք Ձեր բիզնեսի իրական կատարողականի վերաբերյալ մեր տեսլականը:

Մեր ծառայությունները գնահատվում են ինչպես որակի ներքին վերահսկողության վերանայման ընթացակարգերի և քաղաքականության, այնպես էլ Գրանթ Թորնթոն Ինթերնեյշնլի կողմից կանոնավոր գնահատումների միջոցով:



Պարտադիր ֆինանսական հաշվետվությունների աուդիտ



Ֆինանսական հաշվետվությունների կազմում:



Ֆինանսական հաշվետվության միջազգային ստանդարտների (ՖՀՄ), ամերիկյան GAAP և այլ ֆինանսական հաշվետվություններին համապատասխան իրականացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտ



SS անվտանգության երաշխավորման շրջանակ (ITAF) – SS աուդիտի ստանդարտներ, ուղեցույցներ և ընթացակարգեր (ISACA),




Ֆինանսական հաշվետվությունների վերանայում





Ֆինանսական
հաշվետվության միջազգային
ստանդարտներ (ՖՀՄՍ)

Մեր խորհրդատուները կօգնեն
հաղթահարել ՖՀՄՍ-ի անցման դժվարին
գործընթացը՝ հնարավորություն տալով
կենտրոնացնել Ձեր ժամանակը և
ջանքերը բիզնեսի վարմանը:



Կորպորատիվ հաշվետվողականության, ֆինանսական հաշվետվությունների պատրաստում՝ ըստ ՖՀՄՍ-ի

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), ցանկացած ընկերության համար որոշակի դժվարություններ է առաջացնում:

Ամեն տարի Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (IASB) հրապարակում է նոր ստանդարտներ, որոնք կարող են էապես ազդել ինչպես հիմնական հաշվետվությունների ներկայացման, այնպես էլ դրանց ուղեկցող դիտարկումների վրա:

Անխոս, ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս և ներկայացնելիս, գոյություն ունի «լավագույն փորձ» հասկացությունը: Վստահ ենք, որ մեր կողմից մշակված և՛ հրապարակումները, և՛ ձեռնարկները թույլ են տալու գտնել Ձեզ համար ամենից արդյունավետ գործիքները ինչպես Ձեր ներդրողների, այնպես էլ բաժնետերերի հետ հաղորդակցվելիս:

Մենք կարող ենք նաև օգնել ձեզ որոշել, թե ինչ ստանդարտներ են կիրառվելու ձեր հաշվետու ժամանակաշրջանում և տրամադրել գործնական գործիքներ, որոնք ցույց են տալիս ինչպես միջանկյալ, այնպես էլ տարեկան ֆինանսական հաշվետվությունները, որոնք պատրաստվել են ՖՀՄՍ-ի համաձայն:

ՖՀՄՍ-ի կիրառումը կօգնի բարելավել Ձեր ֆինանսական տվյալների ներկայացման որակը, համեմատելիությունն և թափանցիկությունը:

Ֆինանսական գործիքներ՝ ՖՀՄՍ 9

Բոլոր ընկերություններն օգտագործում են ֆինանսական գործիքներ այս կամ այն կերպ՝ սկսած կանխիկ և առևտրային դեբիտորական պարտքերից մինչև բարդ ածանցյալ գործիքներ: ՖՀՄՍ 9 նպատակն է սահմանել սկզբունքներ ֆինանսական հաշվետվություններում ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորություններն արտացոլելու համար, որոնք ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին կներկայացնեն տեղին և օգտակար տեղեկատվություն՝ կազմակերպության ապագա դրամական հոսքերի գումարները, ժամկետներն ու անորոշությունը գնահատելու համար:

Մենք ունենք հստակ պատկերացումներ ստանդարտով պայմանավորված մարտահրավերների վերաբերյալ և պատրաստ ենք օժանդակել ձեզ՝ ապահովելով սահուն անցման գործընթաց:

Բիզնեսի միավորումներ

Բիզնեսի միավորումները կարող են ունենալ նշանակալից ազդեցություն ձեռք բերողի գործողությունների, ռեսուրսների և ռազմավարության վրա:

Գնահատումը, թե արդյոք մի կազմակերպությունը վերահսկում է մյուսին (օր.՝ երբ գոյություն ունի մայր և դուստր կազմակերպություն հարաբերություններ), էական նշանակություն ունի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համատեքստում՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ): Համախմբված ֆինանսական հաշվետվություններին վերաբերող մի շարք հարցեր կարող են էական ազդեցություն ունենալ ձեր բիզնեսի վրա: Մեր ուղեցույցը վերաբերում է ՖՀՄՍ 10-ի «համախմբված ֆինանսական հաշվետվություններ» պահանջների կիրառմանը, որում մենք կարևորում ենք այն խնդիրները, որոնց բախվում եք: Մենք նաև կօժանդակենք Ձեզ բացահայտել և գնահատել ոչ նյութական ակտիվները բիզնեսի միավորման ժամանակ՝ ՖՀՄՍ 3 «Բիզնեսի միավորումներ» ստանդարտի պահանջները կիրառելիս:

Հասույթ գնորդների հետ պայմանագրերից՝ ՖՀՄՍ 15

2014 թվականի հունիսին Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (IASB) հրապարակեց «Հասույթ գնորդների հետ պայմանագրերից» ՖՀՄՍ 15 ստանդարտը:

Սույն ստանդարտի նպատակն է սահմանել սկզբունքներ, որոնք կազմակերպությունը պետք է կիրառի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին՝ գնորդի հետ պայմանագրից առաջացող հասույթի և դրամական հոսքերի բնույթի, գումարի, ժամկետի և անորոշությունների վերաբերյալ օգտակար տեղեկատվություն տրամադրելու համար:

Գրեթե բոլոր կազմակերպություններն հասույթ են ստանում, և բնական է, որ այսօր նրանցից շատերը մի շարք պայմանագրային հարաբերություններ ունեն, որոնք, համաձայն այս ստանդարտի, տարբեր կերպով են կիրառվում:

Այս ստանդարտի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություններ տրամադրելուց բացի, մենք նաև տարբեր ոլորտների ներկայացուցիչներին տրամադրում ենք իրենց իսկ ոլորտի համար կիրառելի ուղեցույցներ:



ՖՀՄՍ-ի ճիշտ կիրառումը կբարձրացնի ձեր ընկերության հանդեպ վստահելիությունը և կբարելավի վարկերի և ներդրումային հնարավորությունների հասանելիությունը:

Վարձակալություններ՝ ՖՀՄՍ 16

ՖՀՄՍ 16 «Վարձակալություն» ստանդարտը ավելի քան 30 տարվա ընթացքում վարձակալության հաշվառման վերաբերյալ առաջին նշանակալից փոփոխությունն է:

Ստանդարտը հիմնարար փոփոխություններ է կատարում վարձակալության հաշվառման մեջ՝ փոխարինելով նախկին հաշվապահական հաշվառմանը, որն այլևս իր նպատակին չի ծառայում:

ՖՀՄՍ 16-ը կազդի լիզինգային ընկերությունների մեծ մասի վրա, որոնք հաշվետվություններ են ներկայացնում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան:

Սա էական ազդեցություն կունենա հիմնական միջոցների և բարձրարժեք սարքավորումների վարձակալների ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ պահանջում է վարձակալության ճանաչում հաշվեկշռում՝ ճանաչելով օգտագործման իրավունքով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը:

Ապահովագրական պայմանագրերի առաջին միջազգային ստանդարտ՝ ՖՀՄՍ 17

ՖՀՄՍ 17-ը ապահովում է ապահովագրական պայմանագրերի հաշվառման բոլոր ասպեկտների համար հետևողական սկզբունքներ: Նոր ստանդարտը փոխարինում է 2004 թվականին հրապարակված IFRS 4 ապահովագրական պայմանագրերին

Այն լուծում է ՖՀՄՍ 4-ից բխող համեմատական խնդիրները՝ պահանջելով միատեսակ հաշվառում բոլոր ապահովագրական պայմանագրերի համար՝ օգուտ բերելով և՛ ներդրողներին, և՛ ապահովագրական ընկերություններին: Ապահովագրական պարտավորությունների և ռիսկերի փոփոխություններն ավելի լավ արտացոլելու համար,

ՖՀՄՍ 17-ը պահանջում է, որ կազմակերպությունը թարմացնի կատարվող դրամական միջոցների հոսքերը, նշելով յուրաքանչյուր հաշվետվության ամսաթիվ օգտագործելով ընթացիկ գնահատումները, որոնք համահունչ են համապատասխան շուկայական տեղեկատվության հետ:



A photograph of two men in business suits. The man in the foreground is looking down at a document with a thoughtful expression, his hand resting on his chin. The man behind him is leaning over, also looking at the document. The image has a purple circular graphic overlay on the left side.

Առաջնության որակի
մշտադիտարկում

Մեր գլոբալ ռազմավարության հիմնական նպատակներից է մեր հաճախորդներին բարձրակարգ ծառայությունների մատուցումը, ինչպես նաև հետևողական սպասարկումը՝ անկախ իրենց գտնվելու վայրից:

Գրանթ Թորնթոնի աուդիտի որակի ստուգում

Յուրաքանչյուր կազմակերպության համար աուդիտի որակի վերահսկողության հաստատված համակարգ ունենալն իր հաճախորդներին որակյալ ծառայությունների մատուցման երաշխիքներից մեկն է:

Այս նպատակով մեր ցանցի յուրաքանչյուր անդամ ընկերություն առնվազն երեք տարին մեկ անցնում է իր՝ աուդիտի որակի վերահսկողության համակարգի ստուգում (GTAR):

GTAR-ը վերահսկում է, որ ցանցի անդամ ընկերությունների կողմից պարտադիր կերպով պահպանվի մասնագիտական ստանդարտներին և աուդիտի գլոբալ քաղաքականության համապատասխանությունը: Այն իրականացվում է անկախ գործընկերների և ցանցի այլ անդամ ընկերությունների ղեկավարների կողմից՝ աուդիտի որակի վերահսկման գլոբալ առաջատարի ղեկավարությամբ:

Ստուգման գործընթացը ներառում է անդամ ընկերության աուդիտի քաղաքականության գնահատումը՝ այն համեմատելով միջազգային կազմակերպության հետ: Թիմը վերանայում է ֆինանսական հաշվետվությունները, աուդիտի հաշվետվությունները, աուդիտորական առաջադրանքի փաստաթղթերը և ֆայլերը, ինչպես նաև հարցազրույց է անցկացնում բաժնետերերի և անձնակազմի հետ:

Ընկերության որակի վերահսկողության համակարգի վերաբերյալ հաշվետվության մեջ նշվում է հետևյալ դրույթներից որևէ մեկը՝

- պատշաճ կերպով նախագծված և արդյունավետ գործող (առանց վերապահումների հաշվետվություն),
- պատշաճ կերպով նախագծված և արդյունավետ գործող՝ բացառությամբ մեկ կամ մի քանի էական թերություններ (որոշ վերապահումներով հաշվետվություն),
- որակի վերահսկողության համակարգի նախագծման կամ շահագործման մեջ էական թերություններ (բացասական հաշվետվություն):
- Երբ GTAR-ը վեր է հանում որոշակի թերություն, անդամ ընկերությունից ակնկալվում է այդ խնդրի լուծում և իր գործողությունների ծրագրի փաստաթղթավորում՝ խելամիտ ժամկետում թերությունները շտկելու և համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու համար:

Երբ անդամ ընկերություններից պահանջվում են հետագա գործողություններ՝ GTAR-ի ընթացքում հայտնաբերված խախտումները/դիտողություններին/ շտկելու/անդրադառնալու համար, կատարվում է հետագա այց կամ հեռակա գնահատում՝ այդ գործողությունների իրականացման առաջընթացը դիտարկելու համար:



Տեխնոլոգիական
լուծումներ. գլոբալ
մոտեցում

Աուդիտորական աշխատանքներ իրականացնելիս մենք կիրառում ենք աուդիտի մեր գլոբալ մեթոդաբանությունը՝ հարթակի միջոցով, որը հայտնի է LEAP անվամբ:



Leap – հանդիսանում է Grant Thornton-ի համաշխարհային որակի ապահովման տեխնոլոգիական հարթակ՝ օգտաբեր հաճախորդների և անդամ ընկերությունների համար: Leap-ի հիմնական նպատակն է որակի կենտրոնացումը և ցանցային ռազմավարություն իրականացնելու աջակցումը: Leap հարթակը բարելավում է մեր գլոբալ աուդիտի մեթոդաբանության որակը հետևողական կիրառման միջոցով. բարելավում է բոլոր աուդիտների կատարումը՝ ապահովելով ավելի մեծ արդյունավետություն և մասշտաբայնություն, հարստացնում է մեր աշխատակիցների աշխատանքային փորձը, ներառյալ մեր հաճախորդների բիզնեսի մասին ավելի խորը պատկերացում կազմելու կարողությունը: Օգտվելով ծրագրային ապահովման դիզայնի ամենաարդի հնարավորություններից և մեր ցանցի անդամ ընկերությունների հավաքական ուժից՝ Leap-ը արդիականացնում է մեր գլոբալ աուդիտի մոտեցումը՝ հարթակում ապագա նորարարությունների հնարավորություններով:



Հաճախորդի հաստատում – հավելված, որը պարտադրում է քաղաքականություններ և ընթացակարգեր, որոնք յուրաքանչյուր անդամ ընկերություն պետք է որդեգրի՝ նոր աուդիտորական առաջադրանք ունենալու նպատակով:



Խորհրդատվություն – հավելված, որը թույլ է տալիս անդամ ընկերության աուդիտորական թիմերին փաստաթղթավորել խորհրդատվություններն ընկերության մասնագետների հետ աուդիտորական և էթիկական հարցերով:



Մեր աուդիտորական թիմերը նույնպես օգտագործում են տվյալների հավաքագրման և վերլուծության գործիքը՝ IDEA-ն, մեծ քանակությամբ ֆինանսական տվյալներ վերլուծելու և հաստատումներ ստանալու/վավերացնելու համար: Օգտագործելով IDEA-ն, հաշված վայրկյանների ընթացքում մեզ հասանելի են դառնում այդ տվյալները:



Ղեկավար
անձնակազմ

Մեր առաջնորդները

« Մեր առաջնորդները համարձակ են և ստեղծագործ: Նրանց մշտապես հնարավորություն է տրվում ներդրումներ կատարել ինչպես սեփական, այնպես էլ իրենց թիմերի մասնագիտական կարողությունները զարգացնելու և կատարելագործելու համար: Նրանք ունեն հստակ տեսլական և կարողություն այդ ամենը իրականություն դարձնելու: »



Արմեն Հովհաննիսյան

Խորհրդի նախագահ

Էլ. հասցե՝ armen.hovhannisyan@am.gt.com

Մեր առաջնորդները համարձակ են և ստեղծագործ: Նրանց մշտապես հնարավորություն է տրվում ներդրումներ կատարել ինչպես սեփական, այնպես էլ իրենց թիմերի մասնագիտական կարողությունները զարգացնելու և կատարելագործելու համար: Նրանք ունեն հստակ տեսլական և կարողություն այդ ամենը իրականություն դարձնելու:



Էմիլ Վասսիլյան

Տեխնիկական տնօրեն/Բաժնետեր,
Աուդիտորական բաժին
Էլ. հասցե՝ emil.vassilyan@am.gt.com



Վլադիսլավ Մուրադյան

Բաժնետեր,
Գործարար ռիսկերի ծառայության
բաժնի ղեկավար
Էլ. հասցե՝ vladislav.muradyan@am.gt.com



Հրանուշ Բակլաչյան

Բաժնետեր,
Աուդիտորական բաժին
Էլ. հասցե՝
hranush.baklachyan@am.gt.com



Ազատ Մանուկյան

Բաժնետեր,
Ֆինանսական ծառայությունների
խորհրդատվության բաժին
Էլ. հասցե՝ azat.manukyan@am.gt.com



Նարինե Աճեմյան

Բաժնետեր,
Աուդիտորական բաժին
Էլ. հասցե՝ narine.achemyan@am.gt.com

Կապ մեզ հետ



ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9



+374 10 50 09 64/61



gta@am.gt.com



www.grantthornton.am